



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ  
ՏՆՕՐԵՆ**

« 22 » 03 2021թ.

№ 08/ԼԱ/ - 148

**Մարտի 15-21-ը դիտված հիդրոոդերևութաբանական  
պայմանները ՀՀ-ում**

Մարտի 16-ին, 19-ին և 21-ին շրջանների զգալի մասում, 15-ին, 17-18-ին և 20-ին առանձին շրջաններում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Հրազդանում 44,4մմ, Ապարան լճայինում՝ 44,2մմ, Ամբերդում՝ 37,8մմ, Ջերմուկում՝ 32մմ, Եղվարդում՝ 25,6մմ Արագած բարձր լեռնայինում և Ծաղկահովիտում՝ 21մմ, Աշտարակում՝ 20,7մմ, Ֆանտանում՝ 20,4մմ, Սևանում՝ 19,6մմ, Որոտանի լճք.-ում՝ 19մմ, Ամասիայում՝ 18մմ, Գյումրիում՝ 15,7մմ, Սեմյոնովկայում՝ 14մմ, Արթիկում՝ 13,5մմ, մնացած շրջաններում՝ 1-12մմ քանակությամբ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը մարտի 15-ին եղել է նորմայի սահմաններում դրական և բացասական շեղումներով (Տավուշում, Լոռիում և Սյունիքում՝ նորմայից բարձր 1-3), 16-ին՝ նորմայից բարձր 3-6 (Արարատյան դաշտում՝ 2-4, Տավուշում՝ նորմայի սահմաններում), 17-ին՝ 4-8, 18-ին՝ 2-5 (Սյունիքում՝ 5-7), 19-20-ին՝ նորմայի սահմաններում դրական և բացասական շեղումներով (Սյունիքում՝ նորմայից բարձր 1-4), 21-ին՝ 2-4 աստիճանով (Տավուշում, Լոռիում՝ նորմայի սահմաններում՝ բացասական շեղումներով):

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է մարտի 17-ին: Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում գրանցվել է +17...+22°C, Տավուշում, Կոտայքի, Արագածոտնի, Վայոց Ձորի և Սյունիքի նախալեռներում՝ +12...+17°C, Լոռիում՝ +10...+15°C (Վանաձորում՝ +16°C), Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝ +5...+10 (Գյումրիում՝ +13°C, Սեմյոնովկայում՝ +4°C) աստիճան տարբություն:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է մարտի 15-ին: Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում գրանցվել է -8...-11°C, Շիրակում, Գեղարքունիքում, Սյունիքի նախալեռներում -5...-10°C (Աշոցքում, Գավառում՝ -11°C, Մասրիկում՝ -13°C, Արթիկում և Սիսիանում՝ -4°C), Լոռիում՝ -4...-6°C, Տավուշում, Կոտայքի, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում՝ -1...-4°C, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում՝ -2...+2 աստիճան:

Շաբաթվա ընթացքում առանձին շրջաններում դիտվել է քամու ուժգնացում 11-18մ/վրկ, պողոթյունները՝ մինչև 15-22մ/վրկ (Պուլզկինի լճք.-ում քամու ուժգնացում՝ 15-20մ/վրկ, պողոթյունները՝ մինչև 20-28մ/վրկ) արագությամբ:

Մարտի 22-ի դրությամբ ձյան ծածկը կազմում է Արագած բարձր լեռնայինում 148սմ, Որոտանի լճ.-ում՝ 108սմ, Ամբերդում՝ 100սմ, Ջերմուկում՝ 92սմ, Սեմյոնովկայում՝ 60սմ, Հրազդանում՝ 51սմ, Անանունի լճ.-ում՝ 45սմ, Ապարան լճայինում՝ 43սմ, Ամասիայում՝ 37սմ, Սևանում՝ 30սմ, Պուշկինի լճ.-ում և Ճամբարակում՝ 25սմ, Աշոցքում՝ 22սմ, Ստեփանավանում՝ 18սմ, Մասրիկում՝ 13սմ, Վանաձորում և Ապարանում՝ 12սմ, մնացած շրջաններում՝ 1-9սմ: Արարատյան դաշտում ձյան ծածկը բացակայում է:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում դիտվել է փոփոխական ռեժիմ:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 2սմ-ով և կազմել՝ 1900.60մ (21.03.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 16 սմ-ով:

Շաբաթվա ընթացքում եղանակային պայմանները նպաստավոր չեն եղել դաշտային աշխատանքներ իրականացնելու համար, ժամանակ առ ժամանակ դիտվել են տեղումներ:

Լեռնային և որոշ նախալեռնային շրջաններում աշնանացան ցորենը շարունակել է գտնվել ձմեռային հանգստի շրջանում, այն դեռ ծածկված է ձյան շերտով, որի բարձրությունը կազմել է 2-18սմ, Սևանում՝ 30, Հրազդանում՝ 51սմ:

Իջևանում սերկևիլի, Մերձավանում դեղձենու և բալենու բողբոջները ուռչեցին, Ուրցաձորում, Աշտարակում, Արտաշատում ծիրանենու բողբոջները բացվեցին, Արարատում տեղ-տեղ՝ ծաղկեց:

Մերձավանում առաջացել են աշնանացան ցորենի հանգուցային արմատները, բույսի բարձրությունը կազմել է 13սմ, դիտվել է առվույտի ցողունի աճ՝ 6սմ բարձրությամբ:

Հարգանքով՝

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Լ.Ազիզյան